

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՏՓԽԻՍԻ ԱԻԵՐՈՒՄԸ ԱՂԱ ՄԱՀՄԱԴ ԽԱՆԻ ՁԵՌՔՈՎ

Անցեալները կատարուեցաւ Տփլիսում քաղաքիս՝ Աղա Մահմադ Խանի ձեռքով աւերուելու հարկւրամեակը. այդ առթիւ աւելորդ չենք համարում մեր ընթերցողներին ծանօթացնել այդ դէպքի մի ընդարձակ նկարագրի հետ, որ գրել է ժամանակակից «Սերօբէ» անունով մէկը։ Այդ նկարագիրը այս վերնագիրն է կրում. «Համառօտ Պատմութիւն աւերեցման Փայտակարան Մայրաքաղաքիս ի խանէն Աղայ Մահմադի ի 1795 եւ ի 11 սեպտեմբերի». ստորագրած է «Ծրեցաւ յանպիտան և ՚ի պանդուխտ երիտասարդէ յումեմնէ ՚ի 1796 և ՚ի 26 մարտի յամալի Փայտակարանի»։ Իսկ պատմութեան վերջում դրուած ողբերգական չափական երկու գրուածքներից վերջնի սկզբնատառերը կազմելով «Սերօբէ» բառը՝ ցոյց են տալիս պատմութեան հեղինակի անունը։

Այդ պատմութիւնը իւր ժամանակին նոյնութեամբ կտպագրուի մեր հրատարակութեամբ լոյս տեսնող

«Իհիւան Հայոց պատմութեան» ժողովածուի հետեւեալ գրքերից մէկում, իսկ այժմ տալիս ենք այստեղ թարգմանաբար մի քաղուածք այնտեղից:

Հիւսիսայինների Եկատերինէ թագուհու փառահեղ կայսրութեան, Վրաստանեայց Քրիստոսազօր թագաւոր Հերակլ երկրորդի տիրապետութեան և հազարացւոց սուլթան Սէլիմ խոնթքեարի կայսերութեան ժամանակ խորին Պարսկաստանից մի բախտաւոր խան Աղամահմատ անունով, ներքինի մականուանեալ, սկսաւ ուրիշ խաների տէրութիւններից շատ մարդիկ ժողովել, բացի նոցանից, որ ինքն ունէր մշտապէս:

Եւ երբ իւր զօրքը շատացաւ՝ մտածեց մի աստիճան էլ բարձրանալ, ուստի թողեց խան կոչումը և սկսաւ կոչել իրան շահ: Նա իւր բնական ճարտասանութեամբ և կեղծուպատիր վարմունքով դէպի ինքը գրաւեց սահմանակից ուրիշ խաներին էլ, որոնց բաւական սէր ցոյց տալուց լետ՝ բաց արեց նոցա առաջ իւր սիրտը, երևալով նոցա բարեկամ և ժողովրդի կարեկից, խորիմաց իմաստասէր և մահմետական օրէնքի նախանձալուզ և վերջապէս ամեն բանի պատրաստ և հաւատի համար արիւն թափելու չափ արթուն՝ ափսոսում էր և աւաղում Ասիոյ բոլոր երկրների մասին, որպէս թէ անտէր և անպէտք են մնացել Նադըշահից մինչև այսօր, և նոցա էլ հարցնում էր թէ անպէս է արդարեւ:

Նոքա էլ իրանց օրէնքի նախանձից շարժուած պատասխանում էին, թէ ճշմարիտ է ձեր մեծութեան ասածները և թէ շատ յարմար ժամանակ է այդ բարեհաճութիւնը գործով հաստատելու, որ այնքան էլ դժուար չէ, եթէ ձեր կամքը լինի, որին մենք համա-

միտ ենք բոլորովին. միայն թէ միջոց գտնենք հազարացուց կայսեր հաճութիւնն էլ առնել:

Այդ միջոցին առաջ եկաւ նոցանից մէկն ու ասաց.

— Թէպէտ նորա հաճութիւնը բաւական է, բայց առաւել հաստատ կլինի եթէ գերմանական կայսրն էլ վաւերացնէ:

Եւ նոքա իսկոյն թղթեր գրեցին և շատ ընծաներով ընտիր ընտիր մարդկանց դեսպանութեան պաշտօնով ուղարկեցին Բիւզանդիայի և Վեննայի կայսրներէ մօտ, որոնք յետ դառնալով պատասխան բերին Կոստանդնուպօլսից թէ՛ այդպէս թող լինի՝ եթէ նախապէս կնուածէ Վրաստանը: Այդպէս էլ Գերմանիայի կայսրից պատասխան եկաւ թէ բարի է՝ բայց պէտք է Վրաստանն ու Բաբելոնը սեպհականել, որով միայն կարող է շահ կոչուիլ:

Սակայն այդ երկուսից ոչ մէկն էլ կամակից չէր նորան, հէնց այդ էր պատճառը, որ այդ տեսակ արգելքներ դրին, գիտենալով, որ դժուար է իրագործել:

Այս պատասխանը լսելով նոքա իրանց ունեցած զօրքով առաջ խաղացին դէպի արևելք և այդ կողմերը պատահած քաղաքներից մի մասը բռնութեամբ հնազանդեցրին նոյն դիւալլուկին, մի քանի քաղաքապետներ էլ դիմադրելով՝ յաղթուեցան, ոմանք էլ իրանց ասից ընդառաջեցին պարանոցից թաշկինակ կամ թուր կապած ի նշան հնազանդութեան, իսկ ոմանք մատուցանում էին նորան իրանց կանայք ու որդիքն իբրև պատանդ: Բայց Շոշայ Իբրահիմ խանը նախ՝ ապաւինեց իւր քաղաքի ամրակառոյց ամրոցը, ուր շտեմարանները ալիւրով, ցորենով և գարիով լիքն ունէր, իսկ յետոյ Հերակլ արքայի նպաստելով իւր թուլ ոյժերով երկար ժամանակ դիմադրեց ու պատերազմեց նոցա

հետ, որոնք էլ չկարողանալով ընդդիմանալ նորա գրնդակներին, ասացին, ինչո՞ւ ենք ի զուր ժամանակ կորցնում այս գործի վերայ, աշխատենք Վրաստանը նուաճել, իսկ Շոշը մերն է ու մերը:

Ասացին ու դիմեցին Վրաստան և Հերակլ Թագաւորի մօտ դեսպաններ ուղարկելով պահանջեցին նորա որդիներից կամ Թոռներից մէկին պատանդ, որով ամենուրեք պիտի տարածուէր, թէ Վրաստանն էլ ընկճուելով հնազանդուեց նոցա և հարկատու եղաւ: Հրովարտակի միտքն էլ հէնց այս էր, որ չէ թէ ուզում եմ որ դու ինձ հպատակ լինես, այլ որպէս զի կարողանամ շահ անուանուիլ:

Սակայն բարեբարոյ Հերակլ Թագաւորը մտածելով՝ գթացաւ տառապեալ քրիստոնեայ ազգերին և չէր ցանկանում այնքան հաւատացեալ հոգիների կորուստը (որովհետեւ շահ դարձողին յատուկ էր տարեցտարի Տփիսից 30 կամ 40 ամուրի և չափահաս տղայք և աղջիկներ տանել, որոց իւր պիղծ աղանդի դարձնելով արուներին ներքնապահ և էգերին հարճ էր դարձնում): Ուստի բացասական պատասխան տուեց, ապաւինելով նախ Աստծուն և ապա ռուսաց օգնութեան:

Կատարինէ կայսրուհին շնորհել էր Հերակլ արքային 25,000 զինուոր, որոնք զինուորուած շարունակ մնում էին Մօզդօք մեծ պատրաստութեամբ և սպասում էին մի հրաւերի, որ ինչպէս բազէ և ցին օգնութիւն հասնեն քրիստոնեաներին: Բայց այն ժահրաթոյն չարը նախապէս իմանալով այդ՝ իւր աղուէսաբարոյ բնաւորութեամբ մտածեց, որ Մօզդօքի «եանարալի» սէրը գրաւէ դէպի ինքը, ուստի դեսպանի ձեռքով ընծաներ ուղարկեց նորան, հետն էլ մի բարեկամական տոմս, որի մէջ գրած էր թէ որովհետեւ Ասիան այն քլիսից ինձ է պատկանում՝ պարտաւոր եմ հաշիւ պահանջել

այս կողմերի բոլոր տիրողներից. ուստի եթէ վրաստանի վալին անգէտ լինելով նպաստ խնդրէ ձեզնից՝ նեղութիւն չկրէք. որովհետեւ ես կամք չունիմ ամենեւին նոցա քաղաքը մտնել, կամ աւերել, ուրեմն դուք անհոգ կացէք: Այսպիսի խօսքերով հաւատացրեց նորան. և քանի անգամ էլ վրաց արքան մարդ էր թռցնում, թէ շուտ եկէք օգնելու մեզ, որովհետեւ անյուս կորչում ենք նեղչից և մեր օրէնքի թշնամու ձեռքից, ամեն անգամ պատասխան էր ստանում թէ՛ մի՛ վախենաք, նա չի վստահանալ ձեր քաղաքը մտնել և թէ Աստուծով ես կհասնեմ իմ բազմախումբ զօրքով, բայց սպասում եմ մեր թագուհու կրկին հրամանին:

Հերակլ արքան իւր յոյսը դնելով այս խօսքերի՝ վերայ, թողեց իւր զօրքերը ժողովելու մտադրութիւնը (եթէկամեանար՝ կարող էր 50,000 ի չափ այրուձի հաւաքել): Այլ բաւականալով ռուսաց զինուորներով՝ միայն բացաղուխների թագաւորին կանչեց, քրիստոնեաներին օգնութեան գալը նորան պատիւ համարելով, որ և եկաւ մօտ 12,000 զինուորուած զօրքով և նորան ընդ առաջեցին Հերակլ արքան բոլոր դատաստանապետներով, քաղաքապետներով, գաւառապետներով և ուրիշ բոլոր մեծամեծներով և մեծ հանգիստով ու հրաձգութեամբ ու ցնծութեամբ բերեց նորան քաղաք: Իսկ սոքա այս բարերարութիւնների և փառաւոր ընդունելութեան փոխարէն սկսան հետզհետէ փախչել, այնպէս որ հազիւ 1000 հոգի մնաց, ու թէ էլ ինչ արին՝ այդ լեռոյ կիմանաք:

Արդ՝ Հերակլ արքան կուսակալների դրդմամբ 1795 թուի օգոստոսի 9-ին դուրս գնաց քաղաքից վերցնելով իւր հետ մնացած 1000 հոգին և իւր 2000 հաւատարիմ հեծելազօրը, 11 «ւերոպէակոստղ» թնդանօթ, 300 վարիչներ, 12 կառավարիչ, նոցա 2 գլխապետներին

(որոնցից մէկի անունն էր Գաբրիէլ (հայկազուն) մայիօր փրիմէր և միւսինը Գէորգի (վրացի) մայիօր սէքօնդ), բաց դրօշակներով, Քրիստոսեան նշաններով և լի լուսով գնաց մօտ երեք օրուայ ճանապարհ և թշնամու շաւղի ելքի մօտ բանակ ձգելով՝ սպասում էր «իւր մուշտակի նպատակին»։ Լրաբերները ամեն օր լուրեր էին բերում այդ բանակը թէ նեռը մօտենում է արդէն։ Իսկ մօտ 16 օր անցնելուց յետոյ մեր անօգնական արքան նոր տարակուսանքի մէջ ընկաւ, վասն զի Արարատեան գաւառի խանը, որ երբեմն բարեկամ էր մեր արքային և այն չարին թշնամի, հաշտուելով՝ իւր զօրքով օգնութիւն հասաւ նորան։ Եւ մինչ մեր արքան այս վարաման մէջ էր՝ այն կոկորդիլոսը եկաւ հասաւ Գանջայ, որի հետ խանը դաշը կապեց, որ բոլոր Վրաստանն աւերեն և նորա թագաւորութիւնը բառնան աշխարհից։ Ջաւադ խանն էլ կնքելով այդ պայմանը յայտնեց նաև Մելիք Մէճնունի հաւանութիւնը այդ պայմանին, որին կանչելով նոյնպէս կնքել տուին այդ դաշը, որովհետև այդ երկուսն էլ անհաշտ թշնամիներ էին Հերակլ արքային։

Եւ այսպէս սոքա զօրք ժողովելով հրամայեցին իրանց սպարապետներին և զօրապետներին գունդեր կազմել, գլխապետներ կարգել, մէկ մասը բազմաթիւ զօրքով մէկ կողմ ուղարկել և միւս մասը միւս կողմը, նշանակած ժամանակ բոլորը միասին ժողովել և պատրաստ լինել այնտեղ, ուր բանակ էր ձգած նոցա մեծը, այս ամենը այսպէս կարգադրելով, խորանները (վրան) ծալեցին և բռնները բարձին և հրամայեցին ճանապարհ ընկնել։ Երբ սոքա չուեցին՝ ինքն էլ ցանկանալով շարժուել՝ հրամայեց մեծ բանակին առաջ գնալ, որոնք անյապաղ ուղևորուեցան փողերի և տաւղի ձայնով և գալիս էին դէպի այս կողմ։

Արդ՝ երբ այս լուրը հասաւ անպաշտպան Հերակլի ահանջին և թէ մօտ են արդէն իւր սահմանին՝ սկսաւ իւր բանակով յետ ու յետ գնալ մինչև իւր քաղաքի այգիների վերջը և այնտեղ բանակ գցեց տարակուսի մէջ ընկղմած. նորա բանակի հեռաւորութիւնը քաղաքից հազիւ կէս փարսախ լինէր, ուր կարելի էր հասնել 12 ըռպէտում: Զօրքը տեսնելով արքայի վշտալի գէմքը և ուղեկալներից ու գիշերապահներից իմանալով, որ թըշնամին բազմաթիւ զօրք ունի և շատ մօտ է իրանց (որը արդէն բանակ էր գցել Սօղանլուխ գիւղի դաշտում) և ստուգելով նոցանից, որ իրանք անկարող են յաղթել բարբարոսներին՝ իսպառ ցրուեցան ու անյայտացան: Ճշմարիտ որ ողբալի էր մեր ծերունազարդ Հերակլ քաջ արքան, նա խիստ տագնապի մէջ էր, որովհետև աչքի առաջ տեսնում էր իւր թագաւորութեան կորուստը, իւր անյաղթ անուան գալիք նախատինքի ամօթը և անհամար քրիստոնեաների գերութիւնը:

Այնուհետև այդ «ամբարհաւած չէզոքը» սեպտեմբերի 9-ին զայրացած հրաման արձակեց իրան ստորադրեալ այն բոլոր խաներին, որոնք նորա բանակումն էին, որ առաւօտուն առաջ ղրկեն ընտիր սպարապետներից մէկին 4000 հեծելազօրքով: Քաղաքի բազմաթիւ ժողովուրդն այս լսելով հառաչանքի և ողբի աղաղակ բարձրացրին և սգում էին իրանց անձերի կորուստը, թողին իրանց ինչն ու ապրանքը, շատերը յուսահատութիւնից սալլով կամ ձիով քաղաքից դուրս գնալով հիւսիսային դրան կրնկակողմը՝ փախչում էին Կովկասի լեռնակողմը: Ովքեր սալլ կամ ձի չունէին՝ ոտով էին գնում, իսկ ովքեր գնալու ոյժ չունէին և գրաստ էլ չէին գտնում և նոքա, ովքեր կարող էին գնալ, բայց ճանապարհից կամ սովից և կամ աւազակներից վախենում էին, այդպիսիներն էլ յուսահատութեան մէջ էին թաղուած:

Երբ ամսի 10-ը լուսացաւ՝ հեծելազօրն առաջ եկաւ և հասաւ այգիների բերանին և սկսեցին համարձակ ու վստահ պատերազմ մղել մեր թնդանօթների դէմ մօտ չորս ժամ շարունակ, բայց յաղթուելով մեր անգլիավարժ թնդանօթների ցնցղաձիր գնդակներից, լետ դարձան և յուսահատուած սկսեցին փախչել, հասնելով Լևիաթանի բանակին՝ սկսեցին տրտունջ բառնալ։

Մինչ այս մինչ այն «բէլիարը» կարծես քնից սթափուելով գիշերուայ 5 ժամին ձայն տուեց ծառաներին, որ մեծամեծներին կանչեն, որոնք ներկայացան նորան ձեռնամած և սրտասուրսուռ երկիւղածութեամբ։ Դորանով էլ չբաւականանալով հրամայեց հրացան արձակել որպէս զի բոլոր զօրքն ու զօրապետները զարթեն և գան իւր ահեղ ատենի առաջ. հազիւ մէկ քառորդ անցած ամենքը պատրաստ էին նորա վրանի հանդէպ։ Երբ «գարշ լէգէոնը» իւր գունդագունդ զօրքի դէզերը տեսաւ՝ բացեց իւր թունալի բերանը, սկսեց նախ գովել նոցա քաջ ու արագ մենամարտութիւնը, իսկ լետոք խօսքի ոճը փոխելով՝ բանաստեղծական ատենաբանութեամբ բարեբանում էր և սքանչելի համարում քաղաքի կանանց ընչաւէտութիւնն ու գեղեցկութիւնը, ժողովրդի բազմութիւնը, մեր արքայի պատուական անդին ակներն ու մարգարիտը, ոսկին ու արծաթը, քաջաւորում էր առ հասարակ իւր զօրքին, յորդորելով աներկիւղ պատերազմել թշնամու դէմ, քաղաքի բոլոր աւարը նոցա շնորհել, նոյնպէս և խոստացաւ գերեալներին նոցա կամքին թողնել, բացի դորանից ամեն մէկի վերայ պարտք դրեց իւրեանց օրէնքին նախանձայօլգ լինել ասելով թէ այդտեղ մեռնողը մարտիրոսների շարքն է դասուում, իսկ յաղթողները արժանի յաղթանակի ու բրաբիոնի, որ երգմամբ խոստանում էր նոցա։

Այդ խրախօյսների և յուսադրութիւնների էր նու-

իրուած նա, երբ արեւելեան կիսագնդի հորիզոնի վերայ լուսի ճաճանչն երեւաց և լուսանում էր սեպտեմբերի 11-ը: Երբ զօրքն արձակեց՝ այնպիսի ուրախ դէմքերով դարձան նոքա, որ տեսնողը կ'կարծէր թէ հարսանիք էին գնում. նոցանից ոմանք իրանց մուճակներն էին կապկպում, ոմանք զանկապտներն էին կապում, ոմանք զրահներն էին հագնում, ոմանք բազպաններն զգենում, միւսները բազուկներն էին վահանաւորում, այլ ատրաճանները վաւոզով լցնում, ոմանք արտախուրակները գլուխն էին անցնում, նիզակները թաղիքի մէջ դնում, հրացանները լցնում, գեղարդները վերցնում, երկսայրիները սրում, սլաքները փշածայր շինում, թրերը պատեաների մէջ պատրաստ դնում, աղեղները լարում, նետերը կապարճներում պատրաստում, հրազէնները վառում, ձիերը պալարակապ անում, ձիերի մաշկը պնդում և առհասարակ ամենքը պատրաստութեան մէջ էին ողբալի քրիստոնեաների դէմ գնալու. և այսպէս եկան հասան մինչև մեր թնդանօթարանից մի նետաձիգ ճանապարհ հեռու. իսկ ինքը չարաժահր քարքը բարձրացաւ մի բարձր լեռան գագաթը, հրամայեց վրան կանգնել և բազմեց նորա մէջ հանդիսի վախճանը դիտելու:

Այդ միջոցին օդը պատած լինելով մշուշով ու ամպերով՝ երկու կողմն էլ մթան մէջ էին, ուստի անգիտութեամբ նոքա կարծում էին թէ մեր զօրքն է շատ, իսկ մենք համարում էինք նոցա զօրքը սակաւաւոր: Կէսօրի ժամանակ բորէասի սիգաճեմ հողմը ցրուեց ամպըն ու մառախուղը և արեւը երեւացրեց իւր պայծառ ճառագայթները: Արդէն պարզ տեսնում էր նոցա զօրքը, որոնց անսպառ բազմութիւնից լեռներն ու դաշտերը անտառապատ էին թւում. իսկ մեր զօրքը իւր աննշանութեամբ թշնամու զարմանքն ու ծիծաղն էին շարժում, որովհետեւ մերերը գրեթէ բոլորն էլ երկչոտ

քաղաքացիներն էին և մի մասն էլ պանդուխտներ:

Այդ ժամանակ նախաջարը հեռագրատակով դիտեց վերալի դաշտը, ուր փախստական կանանց սպիտակ սաւաններն ինչպէս ձիւն էին երևում հեռուից. և անմիջապէս աւետեց իւր բոլոր զօրքին, թէ. ո՞վ անմիտ որսորդներ ի՞նչ էք որսները ձեռքից թողնում: Երբ զօրապետներն ու գլխապետներն այս լսեցին մոռնետիկ հնչեցնելով և բոլոր զօրքը կատաղեցնելով՝ նետաձգուլ թիւնն ու գնդակները աւելցրին, նիզակներն ու սլաքները ինչպէս կրակ վառեցին և հետզհետէ մօտենալով խառնուում էին մեր զօրքերի հետ: Պէտք էր տեսնել և լսել այդ ժամանակ, թէ ինչպէս թրերի ու վահանների շառաչիւնը լեռներն ու բլուրներն էին դղրդեցնում, սրերի ճալթիւնները զարհուրեցնում ամենքին, թնդանօթների թնդիւնը և վառօդի ծուխը օդն ու փոշին իրար խառնում, լարած աղեղների բոմբիւնը և նետերի սուլմունքը լսելիքն էին խլացնում, երկվարների խիւնջալու ձայներն ու բոլոր սպառազէնների որոտը, ինչպէս նաև տիգախաղերի շնչմունքը և ամբողջ խմբերի միահամուռ մահառիթ ձայնը երկրաւոր կեանքի վախճանն էին գուշակում: Այս որ տեսան յետակայ սպարապետները՝ մնացած զօրքն էլ շուտով հարցրին, որով 80,000 ից աւելի եղան:

Տեսաւ մեր անօգնական արքան և ձիւն սանձը շուռ տուեց ու սկսաւ փախչել յուսահատ, նորան հետեւեց և իւր բոլոր զօրքը. դեռ բաղնիքների դրանը չհասած՝ թշնամու գունդը հետեւեց նորան կենդանոյն բռնելու համար, որ տեսնելով արքայի հաւատարիմ մի բերդապահ շտապով երկու թէ երեք թնդանօթ արձակեց հալածողների վերայ և նոքա երկիւղից յետս ընկրկեցան ու այդպիսով փրկուեցաւ ծերունի խճալի թագաւորը:

Իսկ որոնք ճակատ առ ճակատ կռուում էին թնդանօթների դէմ, առաջ մեծ տագնապի մէջ էին ուղմբերից, իսկ լետոյ զայրանալով վայրենաբար վազեցին, բարձրաձայն աղաղակ բարձին առիւծների նման «ալլահ ալլահ» գոչելով և արշաւեցին մեր թնդանօթարանի վերայ:

Երբ մեր թնդանօթների վարիչները տեսան այս պատուհասը, որ տեղում էր վայրենի մահացողների անհուն բազմութիւնից, խոյս տուին, մնաց մենակ հայադգի «Փրիմէր մալիօր» Գաբրիէլը մէկ վարիչով, որ անխոնջ աշխատանքով կրակ էր սփռում Քրիստոսի Խաչի թշնամիների վերայ ի փառս Նորա և 'ի սէր իւր թագաւորի. բայց նա տեղն ու տեղը նահատակուեցաւ և վերացաւ անանց կեանքը լաղթական բրաբիոնը ժառանգելու: Այսպէս էլ մարտիրոսացաւ վրացի «սէքօնդ մալիօրը» նորանից մէկ ժամ առաջ:

Այնուհետև նոքա անարգել վստահութեամբ դիմեցին քաղաքի վերայ և իրանց թունաւոր շունչը փչեցին խաչապաշտների վերայ, սկսան աւերել, լցնել իրանց բեռները պատուական ակներով ու մարգարտով, ոսկով ու արծաթով, բեհեզով ու կերպասեայ լիպասով և մետաքսեայ շորերով:

Կուսակրօն վարդապետներից ոմանց սրախողխող արին, ոմանց ինչպէս գառը մորթեցին ու ոմանց գերի ծախեցին: Այսպէս էլ քահանաներից ոմանց նաւթով այրեցին, ոմանց սպանեցին, ոմանց ծեծեցին, որ ցոյց տան իրանց եկեղեցիների անօթները, և ոմանց գերի տարան: Աշխարհականներից շատին գլխատելով՝ ամեն մէկ գլխի համար երեք թուման գին էին ստանում, որոնցով «ամենաչարը» մզկիթ էր շինում, ոմանց չարում և երկաթներով ու տանջարաններով տանջում, ոմանց էլ գերում: Սոյնպէս էին վարւում և պառաւ

կանանց հետ: Իսկ պատանի տղայոց ու աղջկերանց անվնաս տանում էին իրանց պիղծ տուփանքի և թանկ գրնով ծախելու համար:

Իրանց աղանդակից բերդաբնակ մահմեդականներին չարչարեցին քրիստոնեաներից աւելի ու յետոյ գերի տարան, նոցա աղօթարանը այրեցին: Արքունի պալատի գանձերը դատարկեցին և ապա այրեցին: Սոցանով էլ չբաւականանալով՝ սկսեցին վանքերին ու հոյակապ եկեղեցիներին ձեռը տալ, որոնցից ժողովելով եւ պիսկոպոսական ոսկեհուռն և ականակապ թագերը, եմիփորոնները և քահանայական ոսկէ և ասղնեգործ սաղաւարտներն ու շուրջառները, զգեստներն ու ոսկեզօծ խաչերն ու աւետարանները, արծաթէ բուրվառներն ու քշոցներն և ամենայն անօթները, կրակով այրեցին սըրբերի մասունքը, տէրունական և Տիրամօր պատկերները անարգանքով ոտնակոխ անելուց յետոյ:

Հաշուից երևաց, որ գերածների թիւը 50,000 հոգուց աւելի էր:

Պակաս չէր նաև Կովկաս լերան կողմ փախչողների չարչարանքը. դեռ նոքա ճանապարհին էին, երբ նոցա հասաւ բացազուխների խուժանը, որոնք խոյս էին տուել պատերազմից և փոխանակ օգնելու խեղճ փախստականներին, յափշտակեցին նոցա ինչքը, ոմանց նոյն իսկ մերկացնելով հանգերձներից: Այս էլ փոխարէնն էր մեր թագաւորի փառաւոր ընդունելութեան: Միւս կողմից նեղում էր նոցա սովը և հիւանդութիւնը:

Երբ այս ամենը կատարուեց՝ չարը ինն օրից աւելի չուզեց մնալ այս կողմերը. թէպէտ, ինչպէս ասացինք, նա ոչ միայն քաղաքն էր ուղղում ապականել և այրել, այլ բոլոր Վրաստանը, Կախէթը, Թիալէթը և Կովկաս լերան բոլոր շէն տեղերը, և տիրելով ամենին՝ բոլոր բնակիչներին նուաճել. սակայն այն երկիւղը, որ ունէր

տիեզերակալ Կատարինէ կայսրուհուց, չլծողեց. որովհետեւ լաւ գիտէր, որ մեր քաղաքն ապաւինել էր նորա պաշտպանութեան, մանաւանդ, դաւաճանել էր նորա ինքնակալութեան Մօզդօկի կողմնակալին, այս բանը մտածելով բոլոր քաղաքը կրակ տուեց իւր կամուրջներով և շտապով հեռացաւ:

Երբ որ նոյն կողմնակալն այս լսեց՝ շտապով իւր զօրքն ուղարկեց և գրեթէ կարող էր հասնել նորան, եթէ Կովկասի ճանապարհը հարթ լինէր. երբ նոքա Դուշէթ հասան, ողորմելիների տրտում սրտերը ուրախութեան փոխուեցաւ: Իսկ նախաչարը մեր արքայի սահմանն անցնելով՝ սպասում էր ճիշտ լուր իմանալ յիրաւի գալիս են նոքա թէ ոչ, որ եթէ սխալ լինէր՝ դարնան նորից յետ դառնար: Եւ երբ ստուգեց նոցա գալը մեծ զօրքով, պարսից սահմանին հասնելը, ալանաց մօտից անցնելը, յաղթական պատերազմով մուտքը և այլն, անյոյս փախաւ իւր զօրքով:

Այսպէս ազատուեցանք մնացած բնակիչներս և օրհնում ենք անտէր, խղճալի և ցրուեալ հայոց ազգին օգնող հիւսիսայնոց կայսերուհի Եկատերինէ Ալէքսիովին:

Ասացինք թէ սրբոց մասունքներն այրում էին. բայց Սանահնի ս. Աստուածածնի վանքը, որ կառուցած է Բագրատունեաց Տիեզերակալ Աշոտ Ողորմած թագաւորից և Անուշ թագուհուց, որ 40 սեղան ունի քառասնից խորհրդով, որպէս զի հարկաւոր եղած ժամանակ ննջեցեալների հոգու համար մի օրում 40 պատարագ մատուցուին 40 բեմի վերայ, և որի վերադիտողն ու խնամատարն է առաքելաշաւիղ Յովսէփ արքեպիսկոպոսը, այդ վանքի սրբոց մասունքներն ու հայրապետ-

ների շնորհած կոպարները ազատեց նորին բարձր սըրբազնութեան եղբորորդի պայծառ իշխան Սօլոմօն երկայնաբազուկ Արղութեանցը:

Այժմ ալդ վանքի առաջնորդ կարգուած է նորին բարձր սրբազնութիւնից Սանահնեցի Առաքել վարդապետ Մուրատեանը, որ ս. Յօհան Օձնեցի Հայրապետի սքանչելագործ Աջը ազատեց գերութիւնից:

Միանգամայն ազատուեց և Մողնույ ս. Գէորգի հրաշալի մասը, որի համար մահու չափ չարչարուեց նոյն եկեղեցու տէր Գրիգոր Տէր-Շմաւօնեանց աւագագոյն քահանան, որ գրեթէ կենդանի նահատակ եղաւ:

